ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«05» «հունիսի» 2024 թ. № 198-Ն

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ՝ ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԵՐԻ՝ ՆՈՐ ՀՈՐԱՏԱՆՑՔԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ, ԻՍԿ ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՆԱԵՎ ԳՈՐԾՈՂ ՀՈՐԱՏԱՆՑՔԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՆՈՐ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄՆ ԱՐԳԵԼՎՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 37.1-ին հոդվածի 13-րդ մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել Արարատյան դաշտի՝ Արարատի և Արմավիրի մարզերի՝ նոր հորատանցքերի միջոցով, իսկ ձկնաբուծական նպատակներով նաև գործող հորատանցքերի միջոցով նոր ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումն արգելվող համայնքները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

6/5/2024

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«05» հունիսի 2024թ.
ք. Երևան

Հավելված
ՀՀ վարչապետի N 490 - Ա որոշման

Ց Ա Ն Կ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով ընդունման ենթակա իրավական ակտի տեսակն ու վերնագիրը	Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու կամ ընդունելու համար պատասխանատու պետական կառավարման համակարգի մարմնի անվանումը	Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետները	Իրավական ակտի ընդունման առնչությամբ իրականացվող միջոցառման ֆինանսական ապահովման աղբյուրը	Իրավական ակտի ընդունման իրավական հիմքը
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
1.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 3-ի N 1332-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	2024 թվականի նոյեմբերի երկրորդ տասնօրյակ	ֆինանսավորում չի պահանջվում	«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի մարտի 20-ի ՀՕ-129-Ն օրենքի

	վարչապետի աշխատակազմ ներկայացնելը				1-ին հոդված
2.	«Արարատյան դաշտի Արարատի և Արմավիրի մարզերի նոր հորատանցքերի միջոցով, իսկ ձկնաբուծական նպատակներով՝ նաև գործող հորատանցքերի միջոցով նոր ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումն արգելվող համայնքները սահմանելու մասին» ՀՀ շրջակա միջավայրի նախարարի հրամանի ընդունում	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	2024 թվականի հունիսի առաջին տանօրյակ	ֆինանսավորում չի պահանջվում	«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի մարտի 20-ի ՀՕ-129-Ն օրենքի 13-րդ հոդված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Շրջակա միջավայրի նախարարի
2024 թվականի հոկտեմբերի «5»-ի
N198-Ն հրամանի

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ՝ ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԵՐԻ՝ ՆՈՐ ՀՈՐԱՏԱՆՑՔԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ, ԻՍԿ ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՆԱԵՎ ԳՈՐԾՈՂ ՀՈՐԱՏԱՆՑՔԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՆՈՐ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԱՐԳԵԼՎՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

1. Սույն հավելվածով սահմանվում են Արարատյան դաշտի՝ Արարատի և Արմավիրի մարզերի այն համայնքները, որտեղ արգելվում է նոր հորատանցքերի միջոցով, իսկ ձկնաբուծական նպատակներով նաև գործող հորատանցքերի միջոցով ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը:
2. Արարատի մարզ՝
   1) Արտաշատ համայնք՝ Արտաշատ քաղաք, Աբովյան, Ազատավան, Այգեզարդ, Այգեպատ, Այգեստան, Արաքսավան, Արևշատ; Բաղրամյան, Բարձրաշեն, Բերդիկ, Բերքանուշ, Բյուրավան, Բուրաստան, Գետազատ, Դալար, Դեղձուտ, Դիմիտրով, Դիտակ, Դվին, Լանջազատ, Կանաչուտ, Կաքավաբերդ, Հնաբերդ, Հովտաշեն, Մասիս, Մխչյան, Մրգանուշ, Մրգավան, Մրգավետ, Նարեկ, Նշավան, Նորաշեն, Շահումյան, Ոստան, Ջրաշեն, Վարդաշեն, Վերին Արտաշատ, Քաղցրաշեն գյուղեր,

2) Արարատ համայնք՝ քաղաք Արարատ, Արարատ, Ավշար, Արմաշ, Երասխ, Նոյակերտ, Սուրենավան, Տիգրանաշեն, Զանգակատուն, Լանջառ, Ուրցալանջ, Պարույր Սևակ, Վարդաշատ գյուղեր,

3) Մասիս համայնք՝ Մասիս քաղաք, Այնթապ, Ազատաշեն, Արբաթ, Արգավանդ, Արևաբույր, Գեղանիստ, Գետափնյա, Դաշտավան, Դարակերտ, Դարբնիկ, Զորակ, Խաչփար, Հայանիստ, Հովտաշատ, Ղուկասավան, Մարմարաշեն, Նիզամի, Նոր Խարբերդ, Նոր Կյուրին, Նորաբաց, Նորամարգ, Ջրահովիտ, Ռանչպար, Սայաթ-Նովա, Սիս, Սիփանիկ գյուղեր,

4) Վեդի համայնք՝ քաղաք Վեդի, Գոռավան, Դաշտաքար, Լանջանիստ, Լուսաշող, Շաղափ, Այգավան, Արալեզ, Գինեվետ, Եղեգնավան, Լուսառատ, Նոր Կյանք, Նոր Ուղի, Ոսկետափ, Սիսավան, Վանաշեն, Տափերական, Փոքր Վեդի գյուղեր:

3. Արմավիրի մարզ՝

1) Արմավիր համայնք՝ Արմավիր քաղաք, Այգեվան, Արաքս, Լենուղի, Լուկաշին, Խանջյան, Հացիկ, Մայիսյան, Մյասնիկյան, Նորավան, Սարդարապատ գյուղեր,

2) Վաղարշապատ համայնք՝ Էջմիածին քաղաք, Ոսկեհատ գյուղ,

3) Մեծամոր համայնք՝ Մեծամոր քաղաք, Ալաշկերտ, Ակնալիճ, Ամասիա, Այգեշատ, Արազափ, Արգավանդ, Արևիկ, Արմավիր, Արտաշար, Բամբակաշատ, Բերքաշատ, Գետաշեն, Եղեգնուտ, Երասխահուն, Զարթոնք, Հայկավան, Մարգարա, Մրգաշատ, Նալբանդյան, Նոր Արմավիր, Նոր Արտագերս, Նոր Կեսարիա, Նորապատ, Շենավան, Ջանֆիդա, Ջրաշեն, Վարդանաշեն, Տանձուտ, Տարոնիկ, Փշատավան գյուղեր,

4) Բաղրամյան համայնք՝ Հուշակերտ գյուղ,

5) Արաքս համայնք՝ Գայ, Ակնաշեն, Ապագա, Առատաշեն, Արաքս (Էջմիածնի շրջ.), Արտիմետ, Գրիբոյեդով, Լուսագյուղ, Խորոնք, Հայկաշեն, Մեծամոր, Ջրառատ, Ջրարբի գյուղեր,

6) Խոյ համայնք՝ Գեղակերտ, Այգեշատ (Էջմիածնի շրջ.), Արագած, Արշալույս, Դողս, Ծաղկալանջ, Ծաղկունք, Ծիածան, Հայթաղ, Հովտամեջ, Մոնթեավան, Մրգաստան, Շահումյան, Աղավնատուն, Ամբերդ, Դաշտ, Լեռնամերձ գյուղեր,

7) Փարաքար համայնք՝ Փարաքար, Այգեկ, Արևաշատ, Բաղրամյան, Թաիրով, Մերձավան, Մուսալեռ, Նորակերտ, Պտղունք գյուղեր,

8) Ֆերիկ համայնք՝ Ֆերիկ գյուղ: